ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 5/1, ՀԵՌ.(374-15) 566072

« 13 » հունվարի 2026 թ.

№ ՍՇ/34.2-Ղ4-2/134-2026

«Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ի տնօրեն
Վահե Մխիթարյանին

Հարգելի պարոն Մխիթարյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2025 թվականի դեկտեմբերի 23-ի և 2026 թվականի հունվարի 7-ի գրություններով (պատճենները կցվում են) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին տեղեկացրել է Կոտայքի մարզի Ջրաբեր բնակավայրի մոտ գտնվող ավազի հանքի տարածքում (վագոն տնակ) հայտնաբերված՝ առանց թույլտվության 890-902,5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող բջջային կապի վերահաղորդակի մասին:

Միաժամանակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության համաձայն՝ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոդիդային պեմզաների հանքավայրի հարավարևմտյան տեղամասի հաստատված պաշարների եզրագծի արևելյան անմիջական հարևանությամբ և նշված տարածքի արևմտյան և հյուսիսարևմտյան հարևանությամբ գործունեություն է իրականացնում «Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 60-րդ հոդվածը՝ հանձնաժողովը նախատեսում է քննարկել «Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ի կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու հարցը:

Անհրաժեշտ է 7-օրյա ժամկետում ներկայացնել նշված հարցի կապակցությամբ Ձեր պարզաբանումները:

Առդիր՝ 6 էջ:

Ս. Շահինյան

1/13/2026

X

ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան ☎ 015 58 08 08 (124)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 04/11.1/21-2026

«07» ....01....2026թ.

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ
ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Շահինյան,

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 04/11.1/10571-2025 գրության՝ Ձեզ եմ տրամադրում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստացված ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբեր բնակավայրի մոտ գտնվող ավազի հանքի տարածքում (վագոն տնակ՝ 40.33103N, 44.653348E կոորդինատներ) գործունեություն իրականացնող անձի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 թերթ:

1/7/2026

X

ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MELIKSETYAN GEVORG 2104930308 **ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ.՝ 010 59 00 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

№ ԱԵ/26.1/45038-2025

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանին

Ի պատասխան Ձեր 22.12.2025թ.
թիվ 07/11.1/10570-2025 գրության

Հարգելի՛ պարոն Գասպարյան

Հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբեր բնակավայրի մոտ գտնվող ավազի հանքի տարածքում՝ 40.33103N և 44.653348E կոորդինատներով բնութագրվող կետի տարածքը ծանրաբեռնված չէ ընդերքօգտագործման իրավունքով:

Հայցվող կետը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների (պեռլիտների) հանքավայրի հարավարևմտյան տեղամասի հաստատված պաշարների եզրագծի արևելյան անմիջական հարևանությամբ և նշված տարածքի արևմտյան և հյուսիսարևմտյան հարևանությամբ տեղադրված են հանքավայրի հարավարևմտյան տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված թիվ ՇԱԹ-29/759 («Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ) և թիվ ՇԱԹ-29/701 («Պեմզա Օբս» ՍՊԸ) ընդերքօգտագործման իրավունքները՝ համապատասխանաբար 125 և 225 մ հեռավորությունների վրա:

12/29/2025

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. Երիցյան

Կատարող՝ Ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Աթասյան Հեռ. +37410515162

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 04/11.1/10571-2025

«23» 12 2025թ.

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ
ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Շահինյան,

2025 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2977/25-1 գրությամբ «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը՝ Երևան քաղաքի, ՀՀ Արարատի, ՀՀ Արմավիրի և ՀՀ Կոտայքի մարզերում տեղակայված բջջային կապի «YE021», «YE027», «YE041», «YE193», «JR002», «YE021», «AB001», «AB002», «AB003», «AB004», «AB005», «AB013», «BLV01», «ARJ01», «ALZ01», «ARZN1», «PTN01», «ARKS1», «VE001» և «VE002» բազային կայանների 900 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում առկա խանգարումների պատճառների պարզաբանման համար (պատճենը կցվում է):

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին և 15-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» (այսուհետ՝ «ՀՀԿ») ՊՈԱԿ-ի մասնագետները ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում տեղակայված Ընկերության բջջային կապի «AB001», «AB002», «AB003», «AB004», «AB005», «AB013» և «YE021» բազային կայանների մոտակայքերում իրականացրել են 890.0-902.5 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումներ և ուղղորոշման աշխատանքներ:

Արդյունքում, ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբեր բնակավայրի մոտ գտնվող ավազի հանքի տարածքում (վագոն տնակ՝ 40.33103N, 44.653348E կոորդինատներ) հայտնաբերվել է առանց համապատասխան թույլտվությամբ շահագործվող բջջային կապի վերահաղորդակ:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, Հեռ.՝ (37410) [illegible]

Վերահաղորդակը շահագործող անձը մի քանի րոպեով այն անջատելուց հետո, Ընկերության կողմից «ՀՀԿ» ՊՈԱԿ-ին բանավոր ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «AB001», «AB002», «AB003», «AB004», «AB005», «AB013» և «YE021» բջջային կապի բազային կայաններում խանգարումները վերացել են: Վերահաղորդակը շահագործող անձը հրաժարվել է համագործակցելուց և տեղեկություններ տրամադրելուց:

Վերոնշյալ հասցեում գործունեություն իրականացնող անձի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ճշտելու նպատակով, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հարցում է ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Միաժամանակ հայտնում եմ, որ «ՀՀԿ» ՊՈԱԿ–ի կողմից շարունակվում են Ընկերության սույն թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2977/25-1 գրությամբ նշված բջջային կապի մնացած կայանների աշխատանքը խաթարող ռադիոճառագայթման աղբյուրների հայտնաբերման և տեղորոշման աշխատանքները:

Վերը նշվածի վերաբերյալ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը տեղեկացրել է Ընկերությանը:

Կից ներկայացվում են սպեկտրագրամաների պատճենները:

Առդիր՝ 1 խտացված նյութ:

12/23/2025

X

ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MELIKSETYAN GEVORG 2104930308 **ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ.՝ 010 59 00 65



Ջրաբեր,ավազի հանք 890-902,5 անջատված



Ջրաբեր,Ավազի հանք 890-902,5 ՄՀց միացրած

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
ՍԾ/34.2-Ղ4-2/134-2026պ/տ

Առաքված է / Tax perçue / HAYPOST

ARMENIA YEREVAN 0100 14 JAN 2026 HayPost

L0131407106AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	17/2

17

«Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Արշակունյաց, 75Ա

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN 19 FEB 2026

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող
գրասենյակի կնիքը/
On postal service

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

AL0131407106AM

... ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
Արշակունյաց, 75Ա

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter ☐ Տպագրական արտադրանք/ Printed paper ☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery ☐ Գնահատված/ Insured
Առաքանու թիվը/ No of item LO131407106AM

☐ Հասարակ դրամական փոխանցում/ Ordinary money order

☐ Փոխանցման անդորրագիր/ Impayment money order ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered ☐ վճարվել է/ paid ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Լրացվում է ստացողի կողմից/To be filled in by the receiver

Հավելված Նշում 1՝ ՍՇ/34.2-Դ4-2/134-2026պ/տ
Հավելված Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN
19 FEB 2026

15 JAN 2026